# ՀՀ Կառավարության արձանագրային որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

արձանագրային

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

**ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

1.Հավանություն տալ Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգն ապահովող միջոցառումների ցանկին՝ համաձայն հավելվածի:

Հավելված

ՀՀ կառավարության

2017 թվականի --------- N

արձանագրային որոշման

**ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**

| NN ը/ | **Միջոցառման անվանումը** | **Պատասխանատու կատարողը** | **Համակատարողը** | **Ակնկալվող վերջնական արդյունքը** | **Կատարման ժամկետը** | **Ֆինանսա վոր-ման աղբյուրը** |
|---|---|---|---|---|---|---|

կ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | ՀՀ բնապահպանու-թյան նախարարություն | **ՀՀ էներգետիկ ենթակառուց-վածքների և բնական պաշարների նախարարություն,**<br><br>**ՀՀ ֆինանսների նախարարություն** | **Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարների արդյունավետ կառավարում,** ռեկուլտիվացիոն ֆոնդից անհրաժեշտ դրամական միջոցների նպատակային օգտագործում՝<br><br>1.Իրավահարաբերություն-ների կարգավորում՝ կապված ընդերքօգտագործման իրավունքների դադարեցման գործընթացի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցության/տեղե-կացված լինելու ապահովման հետ:<br><br>2.Իրավահարաբերություն-ների կարգավորում՝ նախատեսելով ընդերքօգ-տագործողների կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների իրագործման ավարտին շրջակա միջավայրի պա | 2018թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավո-րում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | հպանության դրամագլխին հատկացված գումարների վերահաշվարկման մեխանիզմ:<br><br>3. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման և օգտագործման համապատասխան մեխանիզմի սահմանում՝ ընդերքօգտագործման թույլտվությունների ժամկետների ավարտից հետո խախտված հողատարածքներում նոր բիզնես-ծրագրերի իրականացման համար: | | |
| 2. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | ՀՀ բնապահպանու-թյան նախարարություն | ՀՀ ֆինանսների նախարարություն | Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող վճարների կարգավորում /վերջնական հատկացում/, ընդերքօգտագործողին դրամագլխից հատկացումներ կատարելու նպատակով` լիազոր մարմնի կողմից որոշում կայացնելու գործընթացի պարզեցում,<br><br>հանքերի փակման | 2019թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավո-րում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ժամանակ խախտված տարածքների վերականգման աշխատանքների ֆինանսավորման ապահովում: | | |
| 3. | Ընդերքօգտա-գործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման իրականացման ուղեցույցի մշակում | ՀՀ բնապահ-պանու-թյան նախարարություն | - | Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման ուղեցույց | 2020թ. Ֆինանսա-վորման առկայության դեպքում | **Օրենքով չարգելված այլ միջոցներ** |